Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-526-06.03.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) նախադպրոցական լրացուցիչ կրթական ծրագիր՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող նախադպրոցական հիմնական, ***այդ թվում՝*** այլընտրանքային, հեղինակային, միջազգային և փորձարարական կրթական ծրագրերից դուրս ուսուցման ծրագիր, որը նպատակաուղղված է երեխաների նախասիրությունների, զարգացման լրացուցիչ պահանջմունքների բավարարմանը և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների լրացմանն ու կատարելագործմանը.».

2)14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, ***այդ թվում՝*** այլընտրանքային, հեղինակային և միջազգային կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկը ***տեսակով.».***

3) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) նախադպրոցական ծառայություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ դրա ստորաբաժանման կողմից նախադպրոցական տարիքի երեխայի կրթությանը և զարգացմանը միտված ծառայություն, որն իրականացվում է կրթության պետական լիազոված մարմնի կողմից երաշխավորված ծրագրի հիման վրա.»:

4) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված ուսումնադաստիարակչական գործընթացի հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սան, որին նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.».

5)17-րդ կետից հետո լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին և 17.2-կետերով.

«17.1) մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, ուսումնադաստիարակչական գործընթացներին աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն.

17.2) բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ում ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր է, ինչի

արդյունքում նրանք իրենց ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայություններ, գործողություններ, միջոցներ) կարիք ունեն. ».

6) 24-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «օգոստոսի 20-ից մինչև 30-ը» բառերը և թվերը փոխարինել «օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը» բառերով և թվերով.

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջնահերթության իրավունքից, ըստ հերթագրման ամսաթվի, համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, օգտվում են՝

1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի (ծնողների) երեխաները.

2) երեք և ավելի երեխա ունեցող ծնողի (ծնողների) երեխաները.

3) զոհված զինծառայողի երեխան, քույրը, եղբայրը.

4) երկկողմանի ծնողազուրկ երեխան.

5) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայող ծնողի երեխաները.

6) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները.

7) տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաները.

8) տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպությունում) աշխատակիցների երեխաները:»:

Հոդված 3. **Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝**

«Հոդված 8. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները

1. Նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրվում են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային, ***նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին և մանկավարժական աշխատողներին :***

2. Նախադպոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում՝

1) նախադպրոցական ուսումնական հաստատության մակարդակ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն.

2) տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից.

3) հանրապետական մակարդակ՝ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:

3. Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը նրա զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության կազմակերպման նպատակով ***կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական***

գնահատման չափանիշներով իրականացնում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները ***և տրամադրում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացություն:***

4. Սույն հոդվածով նախատեսված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կենտրոնների գործունեության, համապատասխան մակարդակի ծառայությունների տրամադրման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նկատմամբ տարածվում են «Հանրակրթության մասին» օրենքի դրույթները, այնքանով, որքանով դրանց էությամբ կիրառելի են նախադպրոցական կրթության և զարգացման ծառայությունների նկատմամբ:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը ներառում է՝

1) նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները.

2) նախադպրոցական ուսումնական հաստատությունում սաներին զարգացնող միջավայրի չափանիշները:

3) սաների կրթական և զարգացման վերջնարդյունքներն՝ ըստ տարիքային խմբերի և զարգացման ոլորտների.

4) նախադպրոցական կրթության ավարտին սաներից ակնկալվող կարողունակությունները.»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի (այդ թվում նաեւ՝ կրթություն և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձեւավորմանն ու զարգացմանը:».

2) 5-րդ մասում «գործունեություն է» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված նախադպրոցական լրացուցիչ կրթական ծրագրերը»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «դաստիարակի օգնականը,» բառերից հետո լրացնել «երաժշտական ղեկավարը,» բառերը:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «խնամքի,» բառը փոխարինել «երեխայի» բառով:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ անցնում են պարտադիր վերապատրաստում, որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգին համապատասխան:»:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հանել «վերապատրաստված և» բառերը.

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի կամ հանրային ծառայության ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:».

3) 4-րդ մասում «Վերապատրաստման, քննությունների և հավաստագրման ընթացակարգերը,» բառերը փոխարինել «Հավաստագրման ընթացակարգերը» բառերով.

4) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

5) 8-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2) կազմում ***և համապատասխան լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում*** ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը, որոնց համար հիմք են հանդիսանում Կառավարության որոշմամբ հաստատված պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները .»:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «լրացուցիչ կրթության և» բառերը.

Հոդված 12. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«7) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման չափաքանակը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ նպատակային ֆինանսավորման չափաքանակը»:

Հոդված 13. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետում «համար վերապատրաստման և հավաստագրման» բառերը փոխարինել «տրամադրման» բառով.

2) 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9) երաշխավորում է կրթական ծրագրերից բխող ուսումնական նյութերը.».

4) 12-րդ և 13-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը.

13) հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը, դրանց ձեւերը և վարելու կարգը.».

5) 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) 15-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15) նախադպրոցական կրթության համակարգի արդիականացման և զարգացման նպատակով իրականացնում է փորձնական ծրագրեր»:

7) 25-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«25) սահմանում է համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության ու տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին պետական բյուջեից հավելավճար տրամադրելու կարգերը:».

Հոդված 14. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է նպատակային ֆինանսավորում: Ֆինանսավորման կարգը սահմանում է Կառավարությունը:».

3) 5-րդ մասի 6-րդ կետում «4-րդ» թիվը փոխարինել «6-րդ» թվով.

4) 6-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

« 1) լրացուցիչ կրթական ծրագրեր, ինչպես նաև մարզաառողջարանական կամ ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.»:

Հոդված 15. Օրենքի 29-րդ հոդվածից հետո լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 30-րդ հոդված.

«Հոդված 30. Անցումային դրույթներ.

1) Անորոշ ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները հետագա պաշտոնավարման համար մինչև 2024 թվականի հունիսի 1-ը պետք է ապահովեն Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունենալու պահանջը: Սույն դրույթի պահանջները չբավարարած նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրելը լուծվում են»:

Հոդված 16. Սույն օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական ***նորմատիվ*** իրավական ակտերի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-526-06.03.2023-ԳԿ-011/~~0~~1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախադպրոցական կրթության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1~~)~~ 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) նախադպրոցական լրացուցիչ կրթական ծրագիր՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող նախադպրոցական հիմնական, այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային, միջազգային և փորձարարական կրթական ծրագրերից դուրս ուսուցման ծրագիր, որը նպատակաուղղված է երեխաների նախասիրությունների, զարգացման լրացուցիչ պահանջմունքների բավարարմանը և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների լրացմանն ու կատարելագործմանը.».

2~~)~~ 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) ~~«14) նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, այլընտրանքային, հեղինակային, միջազգային և փորձարարական կրթական ծրագրերից առնվազն մեկը.»~~ ~~դ~~նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական հիմնական, ***այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային և միջազգային ~~և փորձարարական~~ կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկը տեսակով.».***

3~~)~~ 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) նախադպրոցական ծառայություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ դրա ստորաբաժանման կողմից նախադպրոցական տարիքի երեխայի կրթությանը և զարգացմանը~~,~~ ~~ինչպես նաև առողջության պահպանմանը~~ միտված ծառայություն, որն իրականացվում է կրթության պետական լիազոված մարմնի կողմից երաշխավորված ծրագրի հիման վրա.»:

4~~)~~ 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված ուսումնադաստիարակչական գործընթացի հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սան, որին նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.».

5~~)~~ 17-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին և 17.2-կետերով.

«17.1) մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, ուսումնադաստիարակչական գործընթացներին

աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն.

~~17.2) բացառիկ ընդունակություններ ունեցող սան՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ով նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշման ձեռքբերման և ուսումնադաստիարակչական գործընթացում դրսեւորում է բացառիկ ունակություններ, կարողություններ և ունի լրացուցիչ ֆիզիկական, միջավայրային և ուսումնական հարմարեցումների կարիք.~~***17.2) բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ում ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր է, ինչի արդյունքում նրանք իրենց ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայություններ, գործողություններ, միջոցներ) կարիք ունեն.*** ».

6) 24-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «օգոստոսի 20-ից մինչև 30-ը» բառերը և թվերը փոխարինել «օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը» բառերով և թվերով.

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջնահերթության իրավունքից, ըստ հերթագրման ամսաթվի, համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, օգտվում են՝

1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի (ծնողների) երեխաները.

2) երեք և ավելի երեխա ունեցող ծնողի (ծնողների) երեխաները.

3) զոհված զինծառայողի երեխան, քույրը, եղբայրը.

4) երկկողմանի ծնողազուրկ երեխան.

5) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայող ծնողի երեխաները.

6) կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները.

7) տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաները.

8) տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպությունում) աշխատակիցների երեխաները:»:

Հոդված 3. **Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝**

«Հոդված 8. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները

1. **Նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրվում են** Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային, նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին և մանկավարժական աշխատողներին ~~տրամադրվում են նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ~~:

2. ~~Երեխայի~~ Նախադպոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում՝

1) նախադպրոցական ուսումնական հաստատության մակարդակ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն.
2) տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից.
3) հանրապետական մակարդակ՝ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:
3. Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը նրա զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության կազմակերպման նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով իրականացնում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները և տրամադրում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացություն՝ ~~կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով~~:
4. Սույն հոդվածով նախատեսված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կենտրոնների գործունեության, համապատասխան մակարդակի ծառայությունների տրամադրման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նկատմամբ տարածվում են «Հանրակրթության մասին» օրենքի դրույթները, այնքանով, որքանով դրանց էությամբ կիրառելի են նախադպրոցական կրթության և զարգացման ծառայությունների նկատմամբ:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը ներառում է՝
1) նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները.
2) նախադպրոցական ուսումնական հաստատությունում սաներին զարգացնող միջավայրի չափանիշները:
3) սաների կրթական և զարգացման վերջնարդյունքներն՝ ըստ տարիքային խմբերի և զարգացման ոլորտների.
4) նախադպրոցական կրթության ավարտին սաներից ակնկալվող կարողունակությունները.»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի՝
1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«1. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի (այդ թվում նաեւ՝ կրթություն և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձեւավորմանն ու զարգացմանը:».
2) 5-րդ մասում «գործունեություն է» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված նախադպրոցական լրացուցիչ կրթական ծրագրերը»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «դաստիարակի օգնականը,» բառերից հետո լրացնել «երաժշտական ղեկավարը,» բառերը:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «խնամքի,» բառը փոխարինել «երեխայի» բառով:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ անցնում են պարտադիր վերապատրաստում, որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգին համապատասխան:»:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1)~~.~~ 2-րդ մասից հանել «վերապատրաստված և» բառերը.

2~~.~~) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի կամ հանրային ծառայության ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:».

3)~~.~~ 4-րդ մասում «Վերապատրաստման, քննությունների և հավաստագրման ընթացակարգերը,» բառերը փոխարինել «Հավաստագրման ընթացակարգերը» բառերով.

4)~~.~~ 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

5)~~.~~ 8-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) կազմում և ~~է~~ համապատասխան լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը, որոնց համար հիմք են հանդիսանում ~~<<~~ Կ~~կ~~առավարության որոշմամբ հաստատված պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման ~~և պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման~~ չափանիշները ~~և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը~~.»:

Հոդված 11. ***Օրենքի*** 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «լրացուցիչ կրթության և» բառերը.

Հոդված 12. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«7) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման չափաքանակը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ նպատակային ֆինանսավորման չափաքանակը»:

Հոդված 13. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝

1)~~.~~ 7-րդ կետում «համար վերապատրաստման և հավաստագրման» բառերը փոխարինել «տրամադրման» բառով.

2)~~.~~ 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3)~~.~~ 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9) երաշխավորում է կրթական ծրագրերից բխող ուսումնական նյութերը.».

4)~~.~~ 12-րդ և 13-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը.

13) հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը, դրանց ձեւերը և վարելու կարգը.».

5)~~.~~ 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6)~~.~~ 15-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15) նախադպրոցական կրթության համակարգի արդիականացման և զարգացման նպատակով իրականացնում է փորձնական ծրագրեր»:

7)~~.~~ 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) սահմանում է համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման, տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության ու տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին պետական բյուջեից հավելավճար տրամադրելու կարգերը:».

Հոդված 14. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1)~~.~~ 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2)~~.~~ 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է նպատակային ֆինանսավորում: Ֆինանսավորման կարգը սահմանում է ~~Հայաստանի Հարապետության~~ Կկառավարությունը:».

3)~~.~~ 5-րդ մասի 6-րդ կետում «4-րդ» թիվը փոխարինել «6-րդ» թվով.

4)~~.~~ 6-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

« 1) լրացուցիչ կրթական ծրագրեր, ինչպես նաև մարզաառողջարանական կամ ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.»:

Հոդված 15. Օրենքի 29-րդ հոդվածից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 30-րդ հոդված.

«Հոդված 30. Անցումային դրույթներ.

1)~~.~~ Անորոշ ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները հետագա պաշտոնավարման համար մինչև 2024 թվականի հունիսի 1-ը պետք է ապահովեն Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունենալու պահանջը: Սույն դրույթի պահանջները չբավարարած նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրելը լուծվում են»:

Հոդված 16. Սույն օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՕ-267-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-526-06.03.2023-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Նախադպրոցական կրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված, 1-ին մաս**	Քննարկվող նորմում կիրառվում են «նախադպրոցական կրթության հիմնական, այլընտրանքային, հեղինակային, միջազգային և փորձարարական ծրագրեր», մինչդեռ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով սահմանված հասկացություններում կիրառվում են «կրթական ծրագիր» բառերը: Հետեւաբար առաջարկում ենք քննարկվող նորմում առկա առաջին «կրթության» բառը հանել և շարադրել «ծրագրերից» բառից առաջ՝ համապատասխան հոլովաձևով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**1-ին հոդված, 1-ին մաս**	«հիմնական» բառից հետո լրացնել «՝այդ թվում» բառերը	Ընդունվել լէ	Ընդունվել է
	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**1-ին հոդված, 1-ին մաս**	«հիմնական» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ «՝***այդ թվում՝ այլընտրանքային, հեղինակային և միջազգային կրթական ծրագիր՝ նախադպրոցական կրթության առնվազն մեկը տեսակով.».***	Ընդունվել է	Ընդունվել է

	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**1-ին հոդված 3-րդ մաս**	Հանել «ինչպես նաև առողջության պահպանմանը» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետից հետո լրացնել նոր՝ 6-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ. «6. 24-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:» Առաջարկը պայմանավորված է Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունների հետ. Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած է ճանաչվում, ինչպես նաև նոր խմբագրությամբ է շարադրվում 28-րդ հոդվածի 4-րդ մասը: Արդյունքում օրենքից դուրս է գալիս «ֆինանսավորման բարձրացված չափաքանակ» հասկացությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**1-ին հոդված 5-րդ մաս**	Լրացվող 17.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ *17.2) բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սան՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, ում ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր է, ինչի արդյունքում նրանք իրենց ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայություններ, գործողություններ, միջոցներ) կարիք ունեն.* ».	Ընդունվել է	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասն անհրաժեշտ է համապատասխանեցնել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջին: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրվում են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային, նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին և	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			մանկավարժական աշխատողներին:»: 2) Հիմք ընդունելով գործող Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջն առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 2-րդ կետում «Երեխայի» բառը փոխարինել «Նախադպրոցական» բառով: 3) Հավի առնելով, որ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 9-րդ հոդվածը, որը կարգավորում է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և դրա արդյունքում եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը նրա զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության կազմակերպման նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով իրականացնում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները և տրամադրում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացություն:»: Նշված կարգավորմամբ պարզ կդառնա, թե որ մարմինն է տալիս երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացություն:		
	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Հոդված 3**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս. 4. Սույն հոդվածով նախատեսված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական		

			աջակցության ծառայությունների կենտրոնների գործունեության, համապատասխան մակարդակի ծառայությունների տրամադրման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նկատմամբ տարածվում են «Հանրակրթության մասին» օրենքի դրույթները, այնքանով, որքանով դրանց էությամբ կիրառելի են նախադպրոցական կրթության և զարգացման ծառայությունների նկատմամբ:		
4.	**ՀՀ կառավարություն**	**8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածում առաջարկում ենք «խնամքի» բառից հետո լրացնել ստորակետ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կապակցված միտքը պահպանելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
5.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդված, 5-րդ կետ,**	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ կետով Օրենքի 19-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ մասի 2-րդ կետի ձևակերպման մեջ անհարկի կրկնություններից խուսափելու համար առաջարկում ենք հիշյալ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) կազմում և համապատասխան լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը, որոնց համար հիմք են հանդիսանում Կառավարության որոշմամբ հաստատված պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները.»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
6.	**ՀՀ կառավարություն**	**11-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածում «20-րդ» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

7.	**ՀՀ կառավարություն**	14-րդ հոդվածի 2-րդ կետ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի և 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվող Օրենքի 28-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասում առկա «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «Կառավարությունը» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
8.	**ՀՀ կառավարություն**	16-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը՝ առաջարկում ենք նշված հոդվածում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
9.	**ՀՀ կառավարություն**		Անհրաժեշտ է Նախագծի դրույթների համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին: Ըստ այդմ՝ նախագծում մասերով համարակալումը, որոնք համարակալված են «.» կետադրական նշաններով առաջարկում ենք փոխարինել «)» նշաններով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
«Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2020 թվականի մայիսի 6-ի ՀՕ-267-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում՝ 1) «(այսուհետ՝ Օրենք)՝» բառերը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծում այլևս հղում չի կատարվում: 2) «2-ին» բառերը փոխարինել «2-րդ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է